

5721

Ա Ն Ձ Ա Ր Ա Ր

Պ. Դ Ա Բ Ի Թ Ա Ր Ե Գ

Ե Ր

Տ Ե Վ Ի Ն Ա Ր

Ա Խ Ա Հ Ի Զ Բ Ա Շ Ե Ա Ն Ա Ե Ր Ի Ն

Բ. Հ. Կ Ո Ւ Տ. Ծ Ա Մ Թ Ա Յ Ի

Հ Ա Յ Ա Ր Ա Յ Հ. Մ Ե Ս Ն Ե Ջ Ի Լ Ի Ց

Ն Ո Ւ Տ Ի


Թ Ա Ր Ո Ս  
Ի Շ Խ Ա Ն

Գ Ր Ա Գ

Ա. Փ Ա Փ Ա Զ Ե Ա Վ

3147-925  
Փ-31

1910.





Հրատարակ. Բ. Հ. Կուլտուրական Միութեան  
Հրատարակչական Մասնաճիւղի—№ 18

9(47.925) ԳՐԱՎԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԵՐ

Φ-31

۱۴

No 8

ଫ ପ ର ନ ଉ

Ի Շ Խ Ա Ն

q r b g

## Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



Издание Б. А. КУЛЬТУРНАГО СОЮЗА

Іздательской секції--№ 1

Подательской Типографии № 18  
Очеркъ изъ армянской исторіи № 8  
**ТОРОСЪ ИШХАНЪ**

Составилъ В. Папазъянъ  
Тип. А. Н. Тараева и Л. Д. Мирзаянца.  
Баку, 1910 г.

38530-ահ.

1.

Անին, Բագրատունեաց իշխանութեան այդ  
փառահեղ մայրաքաղաքը, շնորհիւ հայ կղերի և ազ-  
նւականների գաւաճանութեան, նոյն իսկ իրերի  
բերմամբ, 1045 թւին ընկաւ յոյների ձեռքը: Վեր-  
ջին թագաւոր Գագիկ Բ. իր կեանքի գժբախտ  
տարիները անցկացնելու գնաց օտար երկիրներ  
և այնտեղ էլ անտրգորէն սպանւեց յոյն իշխան-  
ների ձեռքով:

Այդպէս էր, որ ջնջւեց Հայաստանի անկա-  
խութիւնը և այդպիսի վերջ ունեցաւ մայր երկրի  
վերջին թագաւորը:

Յոյները սակայն երկար վայելել չը կարո-  
ղացան իրենց յաղթանակը: Արևելքում վազուց  
ի վեր կուտակւող հեղեղները—ուելջուկ թա-  
թարների բիւրաւոր խմբերը—նետւեցին դէպի  
Փոքր-Ասիա և ոտնատակ տւին ամեն ինչ: Յու-  
նական տիրապետութիւնը ջնջւեց և երկիրը ա-  
ւարի գնաց: Ջարդ ու փշուր եղան արդիւնաւէտ

2004

21445-60

8

կեանքի, ծաղկած ու հարուստ անտեսութեան  
վերջին մնացորդները:

Արիւն, հալածանք և խուճապալից փախուստ  
այնուհետեւ վիճակւեց Հայաստանի բնակչութեան:  
Թաթարների գազանային արշաւանքների գէմ ո-  
չինչ չը մնաց կանգուն:

Տուղիլին յաջորդեց Ալփասլանը, յոյները  
բոլորովին դուրս նետեցին երկրից, իսկ հայե-  
րը ստիպւած եղան թողնել հարթավայրերը և  
գէպի լեռները փախչել, ապաստան գտնելու հա-  
մար նրանց բարձրութիւնների վրայ:

Ամենաապահով կողմերը, ուր կարելի էր յի-  
րաւի մնալ ազատ որ և է թշնամական հարւածից  
և ուր, թէև չարքաշ աշխատանքով, հնարաւոր էր  
ապլուստ գտնել—համարւում էին Տաւրոս լեռ-  
նաշղթայի՝ Ահ-Լեռներ կոչւող բարձրութիւնները:

Ամանոսի լեռներն էին դրանք, ուր հայերը,  
սկսած V I դարից, մանաւանդ Բագրատուննեաց  
թագւորութեան փոթորկալից օրերում, գնացել  
և հետզհետէ տեղաւորւել էին բաւական քանա-  
կութեամբ և նոր հայրենիք էին դոյացրել այն-  
տեղ:

Հաստատւելուն պէս, այդ գաղթականները  
ձեռնարկել էին մշակելի դարձնել լեռնապաշտե-  
րն ու սարալանջերը, օգտւել էին անտառներից,  
բնութեան բոլոր միւս բարիքներից և XI դա-  
րի սկզբներում, սելջուկների արշաւանքի ժա-

մանակ, նրանք բաւական մեծ գաղութներ կադմած՝  
ունէին այնաեղ իրենց գիւղերն ու աւանները,  
վանքերն ու մենաստանները:

Եւ ոչ Տուղրիլը կարողացաւ հասնել նրանց,  
ոչ էլ Ալփասլանը փորձեց իր հրոսակները ու-  
ղարկել գէպի կորստաբեր բարձրութիւնները:

Բացի գրանից, լեռների այդ գրեթէ ան-  
մատչելի գագաթների վրայ, օգտւելով այլեայլ  
պայմաններից, շատ հայ իշխաններ կարողացել  
էին ստեղծել ինքնիշխան փոքրիկ պետութիւն-  
ներ. ունէին սեփական գորք և կառավարութիւն,  
հոյն իսկ բերգեր ու ամրաւթիւններ:

Այսպէս, XI դարի սկզբներում, Տաւրոսի  
կողերի վրայ կային անկախ հայ իշխողներ—  
Լամբրոնի տէր Օշինը, Ծովք գղեակի տէր Ապի-  
րատը, Տարսոնի տէր Բաղունին և վերջապէս  
Քէսունի քաջ իշխան Գող-Վասիլը, որ անակնկալ  
կերպով թշնամիների վրայ յարձակւելուն համար՝  
ստացել էր «գող» տիտղոսը:

Այդ ժամանակներն էր համար Գագիկ Բ.-ի  
ազգականներից Ռուբէն անունով մի իշխան, իր  
կողմակիցների և որդու հետ խուսափելով յոյ-  
ների հետապնդումներից, եկաւ ապաստանելու  
Տաւրոսի լեռները:

Այնտեղ նա հաւաքեց իր շուրջը լեռնցի մի  
խումբ քաջերի, ոգեսրեց նրանց՝ շրջակայքը յու-  
նական իշխանութիւնից հանելու գաղափարովը

և ամենից առաջ յարձակւեց Կոսիդու ամբոցի վրայ:

Յարձակումը անսպասելի էր և զօրեղ: Յոյները գիմադրել չը կարողացան. կիսովին կոտորւեցին և մնացածներն էլ փախան: Ռուբէնը և իւրայինները այդ յաղթութիւնից սրտապնդւած, աւելի առաջ գնացին և շուտով տիրեցին Բարձրիւրդի դղեակին էլ:

Սակայն Գագիկի մահւան լուրն առնելով, այլ և լսելով, որ յունական ոյժեր են կազմակերպւում իր դէմ,—ժողովեց լեռնցիներին և միասին աւելի հեռու գնալով դէպի Սև լեռները, բնակութիւն հաստատեցին Կոռոմոզոլ գիւղում:

Այլտեղ ապահով էր. յունական իշխանութեան ձեռքը չէր իշխիլ հասնելու. բացի դրանից, տեղացի հայեր էլ միանալու եկան նրա հետ, ապա, շրջակայքն ամբողջ մաքրեցին յոյներից, և 1080 թւականին յայտարարեցին հայկական մի նոր անկախ կառավարութիւն, նրա հիմնադիր Ռուբէն իշխանի անունով:

Այնուհետև տասնեհինգ տարի Ռուբինեան փոքրիկ իշխանութիւնը իր նեղ շրջանում մնաց անվտանգ, իսկ Ռուբէնը անկախօրէն իշխեց մինչև իր մահը հանգիստ և անվրդով:

1095 թւին յուջորդից նրան իր որդի Կոստանդինը, Քաջ, խելօք և կտրուկ մարդ էր նա, որ չը գոհացաւ հօր թողած պետութիւններով սահման-

ներովը և ոյժ կազմակերպեց՝ աւելի մեծացնելու նրանց:

Մի տարի չէր անցել, և ահա բաւական ընդարձակ տարածութեամբ, Սև լեռները անցան Ռուբինեանց պետութեան ձեռքը, իսկ յոյները հետզհետէ ետ մուած, իջան դէպի գաշտերը:

Կոստանդինի քայլերը չը մնացին անուշադիր: Բիւզանդիոնը, որ զարմացմամբ հետիւն էր նրա արարքներին, ստիպւած եղաւ լոել առայժմ և չը գիմել պատժական միջոցների, որովհետեւ մահմեզական հոսանքները ուղղուում էին արգէն դէպի կ. Պօլիս, իսկ գիմացը ոչ մի պատւար չը կար: Ահա հէնց այդ Սև լեռների փոքրիկ պետութիւնը իր քաջարի խմբերով կարող էր իրը թումբ, հոսանքը կասեցնող, գուցէ և փշող ու ջատող ամբարտակ հանդիսանալ:

Այդպիսով էլ Կոստանդինը անպատիժ շարունակեց իր հայրենական ժառանգութիւնը մեծացնել:

Այդ նոյն տարիներում սկսեցին Խաչակրաց յայտնի պատերազմները: Եւրոպայում, կրօնաւորների յորդորներով, կազմւեցին բազմամարդ բանակներ, իշխաններ ու թագաւորներ անցան զօրքի գլուխը և մեծ պատրաստութիւններով դէպի Արևելք եկան: Սուրբ երկիրը, այն է՝ Երուսաղէմն ու Պալեստինը «անհաւատների» (մահմեզականների) ձեռքից աղատելու համար:

Կրօնական մի ընդհանուր, հսկայական պատերազմ էր յայտարարւած, որին մասնակցում էին Սրբամուտքի գրեթէ բոլոր քրիստոնեայ պետութիւնները և որին օգնեցին նաև յոյները:

Խաչակիրների բանակները երբ Փոքր-Ասիա դուրս եկան և Անտիոքը պաշարելու համար առաջ խաղացին, պէտք եղաւ աւելի կարճ ճանապարհ գիտցող ուղեցոյցներ և տեղական մանր իշխանութիւնների ձեռնաւութիւնը ունենալ:

Եւ նրանք գիմեցին այդ բանի համար կոստանդինին ևս:

Սեղեռնցիք ամենայն պատրաստականութեամբ տւին խաչակիրներին ուղեցոյց մի գունդ, իսկ յետոյ էլ, երբ Անտիոքի պաշարման ընթացքում քրիստոնեայ բանակի պաշարը սաստիկ պակասեց և մեծ զոհեր տեղի ունեցան — կոստանդինը ինքնարերաբար շտապեց օգնութեան հասնել: Նա առաւ մթերք, հասցըց խաչակիրներին, պատէր ուղարկեց իր նիզակակից Օշին, Ապիշտատ, Վասիլ ևայլն իշխաններին՝ նոյնը անելու, այլ և հրաման հանեց հայ վանքերին, որ անմիջապէս պաշար մատակարարեն քրիստոնեայ կուղներին:

Այդ վարմունքը այնքան ժամանակին էր և գուր եկաւ խաչակիրներին, որ նրանց ղեկավարները, Անտիոքը առնելուց յետոյ, կոստան-

դինին ուղարկեցին նախ շատ թանկագին աւար, իսկ յետոյ հանդիսաւորապէս նւիրեցին նրան Մարտիզ (մեծ իշխան) և «Հիւպատոս նայ ազգի» տիտղոսները:

Յոյները, որ դաշնակից էին խաչակիրներին և ընծայ ստացան նրանցից Անտիոքը — ստիպւած եղան ընդունել հայկական նոր պետութեան գոյութիւնը և հաստատել կոստանդինի տիտղոսները:

Կոստանդինի յաջորդ թորոս առաջինը շատ աւելի յանդուգն ու լայն ծրագիրների ձեռք զարկաւ: Նա արդէն լեռներից ցած իջնել սկսեց. ոչ միայն իջնել, այլ հեռուները, մինչև ծռվն իսկ գնալու ձգտել:

Այդպէս, նա հետզհետէ խլեց յոյներից Անարդարա քարտ քաղաքը իր շրջակայքով, ապա Կիլիկիայի մեծ մասը առաւ իր իշխանութեան տակ:

Բիւզանդիոնը նոր միայն զգաց վտանգը և տեսաւ, թէ ինչպէս աճում էր ու սպառնագին իր առջնը ցցւում այդ նոր պետութիւնը: Զղջաց, որ հէնց սկզբից չէր ճգմել նրան ու ոչնչացըել և այժմ նրա գէմ կանոնաւոր կոխւներ մղելու հարկի մէջ էր մտնում:

Նախ քան իր զօրութեամբը թորոսին ետ մղելը, կայսրը փորձեց սելջուկներին և թիւրքմեններին առաջ նետել:

Եւ յիրաւի, այդ թալանող խումբերը խարս  
ւած յունաց խոստումներից, և հաւատալով, որ  
մեծ աւար պիտի ձեռք բերէին, յանկարծ ներս  
խուժեցին Անարդարայի գաւառը:

Թորոսը քնած չէր: Ո՞չ միայն մի փառաւոր  
ջարդ տւաւ աւազակներին և ընդ միշտ կարեց  
նրանց ախորժակը, այլ և իմանալով յոյների մա-  
տար գրանում, աւելի ևս առաջ գնաց, խլեց միւս  
գաւառներն էլ ու մտաւ Կապագովկիա:

Թորոսից յետոյ, Թուբինեանց իշխանութեան  
աթոռի վրայ նստողը եղաւ նրա Լևոն եղբայրը՝  
Լևոն Առաջինը: Մի աւելի փառասէր մարդ, որ  
սաստիկ բարկացրեց յոյներին, որովհետեւ խլեց  
նրանցից մինչեւ իսկ Կիլիկիայի երկու նշանաւոր  
քաղաքները—Մամեստիան և Տարսոնը:

Այլևս համբերել չը կարողացաւ Բիւզան-  
դիոնը: 1136 թւին ինքը Յովհաննէս Կոմնենոս  
կայսը մեծ բանակով Կիլիկիա մտաւ և վճռեց  
մի անգամ ընդ միշտ վերջ գնել լեռնցիների  
յանդկնութիւններին:

Լևոնը կայսերական այդ մեծ ոյժին դիմա-  
դրելու ոչ վարպետութիւն ունեցաւ և ոչ էլ կա-  
րողութիւն: Միմեանց ետից յաղթւած, ետ քաշ-  
ւեց, ու յոյները դարձեալ տիրեցին Աղանան,  
Մամեստիան, Տարսոնը և վերջիվերջոյ եկան պա-  
շարելու Անարդարան:

Թուբինեանց իշխանը ստիպւած եղաւ այդ  
քաղաքն էլ թողնել յոյներին, և ինքը ամրանու-  
լու գնաց Վահկայ բերդում: Բայց կայսը հետա-  
պնդեց, առաւ ամրոցը: Լեռնը իր ընտանիքով  
բռնւեց գերի: Կայսը զդժոյել տւաւ նրան, և  
կնոջն ու երկու որդիների—Թուբինի և Թորոսի  
հետ, ուղարկեց կ. Պօլիս:

Այդպէս վերջացան երջանիկ օրերը Սև-Լեռ-  
ների համար և այդպէս ջնջւեց Թուբինեանց ան-  
կախ նոր պետութիւնը, որ հազիւ գեռ 50 տար-  
ւայ կեանք ունէր և նոր էր սկսում զարգանալ:

Այնուհետև երկիրը դարձեալ ընկաւ: յոյն  
կուսակալների, իշխանների և վասալների ձեռքը:  
Սրանք բաժան-բաժան արին բնակիչներին իրենց  
մէջ, հաստատւեցին բերդերում և դղեակներում,  
թալանի տւին հայկական վանքերն ու եկեղեցի-  
ները և սկսեցին անզթօրէն հարստահարելու տան-  
շել հայ ժողովրդին:

Պէտք էր այդ ամենի հետ տեսնել յոյների  
ծաղը ուղղւած հայերին. պէտք էր նաև տես-  
նել հայ ազգաբնակութեան տանջալից զայրոյթը,  
որ նորից անարդ լուծը եկել-ծանրանում էր  
նրանց հպարտ վզի վրայ...

2.

Մի ամբողջ տարի Լևոն իշխանը կնոջ և երկու որդիների հետ մնաց Կ. Պօլսի բանտերում արգելւած ու տառապանքով լի: Թշւառ մարդը բոլորովին հիւծւել էր արդէն՝ կրած վշտերիցն ու շղթայից: Կինը և որդիներն էլ նրա հետ կըում էին նոյն ցաւերը, նոյն անարգանքը:

Շրջապատող թշնամալից միջավայրում, սակայն, նրանք զուրկ չէին բարեկամներից: Յունական արքունիքում կային Լևոնի անձնական մտերիմերից, որոնք անտարբեր չը մնացին և ամեն ջանք դործ դրին՝ թեթևացնելու համար բանտարկեալների վիճակը:

Նրանք միւս կողմից այնքան յամառօրէն և յաճախ թախանձանքով դիմեցին կայսրին, որ վերջիվերջոյ յաջողութիւն գտան: Կայսրը ոչ միայն ազատեց բանտից Լևոնին և երկու որդոցը, այլ և նրանց տեղ տւառ իր արքունիքում, սիրաշահեց ու պատեց, և Ռուբէն որդուն մացրեց իր անձնական թիկնապահների շարքը:

Առհասարակ երկու հայ իշխանիկները դուր եկան կայսրին և ամբողջ արքունիքին, շնորհիւ իրենց աչքի խփող շատ յատկութիւնների:

Ռուբէնը մի թիկնաւէտ, առողջ և հուժկու երիտասարդ էր, հերքիւլէսական ոյժի տէր: Պատմում են նրա մասին, որ մի օր, երբ կայ-

սրին սպասաւորում էր բաղնիքում, կամենալով արտաքոյ կարգի մի ծառայութիւն անել, կորգեց գետնից մարմարիայ խոշոր աւազանը լի տաք ջրով և բերեց ու դրաւ վեհապետի առաջ:

Ամենքը ապշեցին, ինքը կայսրն էլ մնաց ապշած, տեսնելով այդ մեծ ոյժը: Որովհետեւ, ինչպէս ասում է պատմութիւնը, աւազանը չորս մարդ տեղիցը շարժել չէին կարող:

Կայսեր սիրելի դարձած օտարի այգլիսի մեծ ոյժը առիթ դարձաւ յոյն պալատականների համար՝ զանազան կասկածներ ծագեցնելու: Եւ այնուհետեւ ամեն տեսակ զրպարտութիւնների, դաւերի մէջ խճճեցին հայ երիտասարդին ու վերջիվերջոյ հաւատացըրին կայսրին, թէ նա մտածում էր արքայասպանութիւնով հանել հայրենիքի և իրենց գերութեան վրէժը:

Կայսրը հաւատաց նրանց երկար կրկնւող այդ զրպարտութիւններին և նրամայեց կուրացնել թշւառ երիտասարդին, իսկ նրա ծնողներին ու եղբօրը դարձեալ բանտարկել շղթայակապ:

Զայրոյթից, կակծից ու ցաւից չը կարողացաւ ապրել լեռնցի հպարտ ոգին և մեռաւ՝ անիծելով յունական արքունիքի զգւելի դաւերը, անիծելով իր անմտութիւնն ևս, որ չէր վճռել մեռնելու այնտեղ—լեռների վրայ՝ պաշտպանելով երկիրն ու իր անձը:

Սոսկալի տպաւորութիւն գործեց այդ մա-

հը Լեռնի և Թորոսի վրայ։ Վշտիցը Ռուբէնի մայրը մեռաւ։ Երկար չապրեց այնուհետև Լեռնն էլ։ Ապրել չը կամեցաւ այդքան մեծ և ծանր կորուստներից յետոյ։ Ոյժ չէր մնացել. ծերացել էր, ծիւրւել և զգւել կեանքից։

Պատմում են, որ Թորոսը երազ էր տեսել մի օր, թէ իրը բանախ գոները բացւել էին յանկարծ, ներս էր մտել մի փառահեղ մարդ և տւել նրան մի հաց, վրան ձուկ դրած։ Երբ նա առել էր հիացած, հայրն էլ խնդրել էր, վերցրել, բայց չէր կերել։

Երբ հօրը պատմել էր Թորոսը այդ երազը, ժպտել էր ծերունի իշխանը և այսպէս մեկնել.

— Ուրախացիր, որդեակ, որովհետեւ ինձ հետ կրածդ այս բոլոր տառապանքներից յետոյ, դու պիտի դարձեալ տիրես մեր կորցրած երկներին ու լեռներին, այլ և պիտի ընդարձակես նրան մինչև ծովը։

Լեռնի մահանից յետոյ կայսը խղճաց Թորոսին, հսնեց նրան բանախից և իրեն սպասաւորող ազնւականների որդոց շարքը դասեց նորից։

Երիտասարդը, թէկ վաղաժամ վշտերից ու տառապանքներից փորձառու, եղել էր կասկածու, ծածկամիտ և սաստիկ զգուշաւոր անձ, սակայն և գտել էր յունական դաւերից ու պարատական խորամանկութիւններից անվնաս մնա-

լու միջոցը։ — Ուսել էր վարպետօրէն կեղծել և ձեացնել իրեն գւարթամիտ ու քաղցրախօս։

Այդ յատկութիւնները մեծապէս ծառայեցին իրեն թէ սիրելի դառնալու կայսրին, պարատականներին և արքունիքին և թէ ի գերև հանելու համար լրտեսող հսկողութիւններն ու փորձիչ դաւերը։

— Գեղեցկատեսիլ, վայելչակազմ և քաջարի տղամարդ էր Թորոսը։ Գիտէր շատ լաւ յունարէն լեզուն, ուսել էր պալատական ձեերն ու նըրութիւնները, ծանօթ էր միջավայրի իւրաքանչիւր գրութեան հետ և ճանաչում էր շրջապատող անձերի խարդաւանքները։

Թուբէն եզրօր այն զարհուրելի մահը միշտ առջեն էր և թելազրում էր, ինքնապաշտպանութեան համար, լինել շրջահայեց ու խոնեմ։

Այդ էր անշուշտ պատճառը, որ նրա մասին եղած ամբաստանութիւնները մնացին ապարդիւն։ Կայսը չը հաւատաց և շարունակեց սիրել ու պատել Թորոսին։

Թորոսի այդ բարձր գիրքը, քաղցր լեզուն, գեղատեսիլ կազմւածքը և արիութիւննը արքունիքի մէջ շատ-շատերին գրաւեցին, այնպէս որ մեծահարուստ մի տիկին սիրահարւեց, կարողացաւ գրաւել նրան, ամուսնանալ հետը և այդպիսով էլ իր հարստութիւնը գրեց նրա արամագրութեան տակ։

Այդ ամռանութիւնը շատ բախտաւոր կերպով տեղի ունեցաւ ճիշտ ժամանակին, Թուրուսին փրկելու համար վերահաս վասնգներից:

Նոյն այդ տարին մեռաւ նրա պաշտպան Յովհաննէս կայսրը։ Մկսեցին պալատում սովորական դաւերն ու միմեանց դէմ հանած հալածանքները։ Նոր կայսեր սիրելիները անգթօրէն ոչնչացրին հինին մօտ եղած անձնաւորութիւններին, վանդեցին նրանց արքունիքից և նոյն իսկ շատերին էլ անհետացրին։

Թորոսը բախտաւոր գտնեց, որ ամուսին էր  
շատ ազգեցիկ մի յոյն կնոջ, ունէր իր սեփա-  
կան կալածները և կարող էր հեռու մնալ պա-  
լատից և մայրաքաղաքից, միաժամանակ ծրա-  
գը ելով, քանի որ այժմ անկախ մարդ էր, վերա-  
դառնալ հայրենիք:

Յաջորդ տարին մեռաւ նրա յոյն կինը և  
հարստոթիւնն ամբողջ մնաց Թորսախն:

Ժամանակն էր իրագործելու հայրենիք գնալու միտքը։ Շտապեց, ծախեց-ծախծեց կնոջից մնացած կալւածները, գնեց սեփական մինաւ, լցրեց նրան առրանքով և իբր վաճառական ծպտած՝ նաւեց գէպի Փոքր-ասիսկան ափերը։

1143 թւին, առանց որ և է փորձանքի և արգելքի, Թորոսը ափ իջաւ Անտիոքի սահմաններում, ծախսեց նաև ու ապրանքները, ապահով

աեղ զրաւ հարստութիւնը կ, զիմեց պէսի հայ-  
րենի լեռները:

Օ՞ն, ինչպիսի ուրախութիւն էր այն, երբ  
երկար քայլելուց յետոյ, ելած Սկ-Լեռների վրայ,  
կանգ առաւ երկնամերձ գագաթներից մէկի լան-  
ջին, լայնաբերան շնչեց կարօսով փափագած  
օդը, հրճանքով նայեց հեռուի տպառաժոււտ կո-  
ղերն ի վեր թառած գիւղերին, մշուշի մէջ  
լողացող ծառախիտ լանջերը դիտեց և հեռուն,  
կանաչաւուն քուլաների նման տարածւած մեծ  
անտառներով հիացաւ:

Ինչպիսի հաճոյք էր այն, երբ նստած մի  
ժայռի վրայ, լուռ ուշադրութեամբ զննեց արա-  
հեաներով լեռներն ի վեր գնացող կարաւանները,  
տեսաւ իր հայրենակիցների թիկնաւետ, հսկայ  
հասակները և ուրախութեամբ ականջ դրաւ հայ-  
րենակսն խրոխաւ երգերի ձայները, որոնք ծփում-  
լողում էին ձորերի խորքերից դէպի վեր, դէ-  
պի կնճռոտ սարալանջերը...

Ու ելաւ, քայլեց Սև-Լեռների բարձրերը,  
մազլցեց, գտաւ դէպի հայրական երկրները տա-  
նող ծանօթ ճանապարհները:

Սակայն միշտ զգոյշ և խոհեմ, սովոր՝ շրջանայեցողութեամբ ու առանց շտապելու գործելու, նա կանգ առնել որոշեց նախ առաջին հանդիպած անձանօթ մի դիւլում և այնտեղ տեղեկութիւններ ժողովել, իմանալ գոնէ, թէ ինչեր

էին կատարւել իր գերութեան երկար տարիների ընթացքում։

Սնհրաժեշտ էր ամենից առաջ գտնել մի ապահով, հաւատարիմ անձ, որին կարելի լինէր վստահել, հարց ու փորձ անել, պէտք եղած ժամանակ լրաբեր ու լրատու դարձնել և այդպիսով ծանօթանալ երկրի դրութեան, ժողովրդի տրամադրութեան հետ։

Թագնւելուց օգուտ չը կար, հարկաւոր էր երեան գալ, ի հարկէ զգոյշ սկզբնաւորութեամբ և ապահով լինելուց յետոյ, որ նորից չէր բռնվիլ ու այս անդամ գնալ-մեռնիլ կ. Պօլսի բանահրում։

Այդպէս մտածելով ու ծրագրելով էր, որ երբ մութն իջաւ գիւփի վրայ, հարցը հանդիպողներին և գտաւ քահանայի տունը։

Ոչ ոք առանձնապէս և կասկածաւոր կերպով ուշադրութիւն չը դարձրեց նրա վրայ։ Հազուստն ու գէնքերը չէին տարբերում տեղական տարազից։ Պարզապէս մի օտարական էր, մի անցորդ, որ գիշերելու տեղ էր որոնում։

### 3.

Մի ծերունի կրօնաւոր էր, որ գիմաւորեց նրան ու ներս հրաւիրեց։ Թորոսը հարկ չը համարեց խկոյն և բացւել նրան։ Պարզ հիւրասիրութիւն էր խնդրածը։ Ներսում, յետոյ կը

յայտնէր իր ով լինելը։ Օռայժմ, եթէ սկզբնացին դեռ չէր կրցը հիւրընկալական նւիրական սովորութիւնը, և եթէ հայ քահանան չէր մոռացել, որ իր տունը ամեն պանդխափ, անպատճարի և կարօտեալի համար պիտի բաց լինէր, — ապա ուրեմն թող հեռաց եկող յոդնածին տար մի կտոր ուտելու բան և մի անկիւն՝ քննելու։

Թահանան մի տեսակ պատկառանք գգալով անծանօթի կերպարտնքիցն ու կեցւածքից, ներս հրամցը նրան յարգանքով և սիրալիք։ Չէթէ ազօտ ճրագի լուսաւորութեան տակ, երբ ուտելու բան էին բերում, թորոսը սկսեց խօսեցնել քահանային։

Զերմ հայրենասէր և բաւական վշացած՝ ծերունին նախ կցկառուր և ապա արտասւալից աչքերով պատմեց թորոսին այն բոլոր անցքերը, որոնց չնորհիւ տապալւել էր Ռուբինեանց իշխանութիւնը և իրենց խրոխտ հայրենիքի անկախութիւնը։ Յետոյ սկսեց մանրամասնութեան մէջ մտնել, թէ ինչպէս յոյները հալածանք էին հանել հայ լեզւի և կրօնի դէմ, ինչպէս զղեակների մէջ նստող վասալները պարբերաբար հարցաւարում էին ժողովրդին, թալանում և ծաղրի և նթարկում նրանց սրբութիւնները։

Աւզգակի անտանելի էր գարձել այդ լուծը։ Ոչինչ չէր խնայւում անարդ ստրկութիւնը զգացնել տալու համար ամեն բոպէ...

Նոյն տեսակ բարբարոսներ էին նաև այն եւրոպացի քրիստոնեայ իշխանները, որոնք իրը թէ Սուլթ-Երկիրը ազատողների փառաւոր յաջորդներն էին:

Թիկունք ունենալով յոյն կուսակալներին և կայսերական այլնայլ արտօնութիւնների տէր լինելով, նրանք հայ իշխաններից խլում էին կալւածները, մահմեդականներից աւելի վատ կերպովնեղում էին բնակիչներին, յաճախ կապանքների տակ մեռցնում, կուրացնում և կախում նրանց... անմեղ տղայոց հետ անգամ վարւում էին խստութեամբ ու չարչարելով և այդպէս անգամ ճանապարհով հարստանում...<sup>1)</sup>

— Եւ այդ ամենի վրայ—աւելացրեց ծերունի քահանան դասնութեամբ—իւրաքանչիւր քայլում ծաղրւում ենք մենք՝ մեզ համար նւիրական եղած բոլոր կէտերում. ծաղրում են մեր ծէսերը, մեր եկեղեցին անարգում ու պղծում, տալա իբր նախատինք, մեր երեսին են նետում Ռուբէն իշխանիկի անարգ մահը... և Թորոս իշխանիկի յոյն դառնալը:

Թորոսը հազիւ կարողացաւ զսպել բուռն մի շարժում. նայեց քահանային զարմացողի դէմքով և ասաց միայն.

— Յոյն դառնալը...

<sup>1)</sup> Մատթէսս Ռւսհայեցի պատմիչի խօսքերն են:

— Այն, ասաց քահանան.—այստեղ բոլորս արգէն գիտենք, մեզ այդպէս են լուր հասցըել նոյն իսկ մերոնք, որ Թորոսը հոռոմի կրօնն է ընդունել, ամուսնացել է հոռոմ հարուստ կնոջ վրայ և իր ազգն ու հաւատը մոռացել... Հեշտութեան մէջ մոռացել է երիտասարդը իր հօր ու եղբօր վրէժը, մոռացել է, որ հայրենիքը գերի է և ժողովուրդը ստրուկ... Ո՞վ գիտէ, գուցէ նոյն իսկ թշւառ պատառնին, գեղիսութեան մէջ փչացած, մոռացել է պապենական լեզուն...

Այդ բոլորը ասում էր քահանան խիստ դառնացած, երբեմն զայրոյթից դողդոջուն ձայնով և երբեմն էլ յուսահատ թախիծով լի:

Հայեացքը խոնարհ, Թորոսը սկզբում լսում էր հանդարտ, բայց յետոյ, քահանայի յուրզմունքով համակւած՝ գունատւեց. Իսկ երբ լսեց իր մասին ասւածները, ցնցեց խրոխտութեամբ գլուխը և ասաց.

— Ահ ոչ, քահանայ, այդտեղ արգէն դուսիսաւում ես. մի կարծիր, որ Ռուբէնեան Թորոսը, Լեռնի որդին, ընդունակ լինի այդքան ընկնելու, այդ աստիճան շուտ մոռացութեան տալու իր եղբօր անարգ մահւան վրէժը և հօրն ու մօր տառապանքների արժէքը... Ո՞չ, պէտք է մտածել, որ Թորոսը, իր տառապանքների խարազանումովը փորձառու և զգոյշ, ստիպւած է եղել կեղծելու, նոյն իսկ ճշմարիտ յոյն ձևանալու,

յոյն կին առնելու... ես լրել եմ եղածը... Գիտեմ շատ բան... Թորոսի յոյն կինը արդէն մեռել է. Թորոսը նրա թողած գանձը առել, փախել է կ. Պօլսից և, ով գլուխէ, գուցէ այժմ Սևեռներումն է և ուզում է հայրենիքը ազատել յափշտակողների ձեռքից: Բայց ի՞նչ կարող է անել Թորոսը, թէկուզ և իշխան ու Ռուբինեանց ժառանգը, որքան և սիրէ նա իր հայրենիքն ու վրէժները... Ժողովներդը պիտի լինի պատրաստ, ժողովներդը պիտի արամագիր լինի անկախութեան ու վրէժ առնելու բռնաւորներից...

Այնուհետև Թորոսը երկար չը պահեց քահանային տարակուսանքի մէջ և յայտնեց նրան իր ով լինելը: Ծերունին հրճւանքով և սրտի ամենամեծ ուրախութեամբ, որ զսպել չ'աշխատեց, խմացաւ, որ իրեն հետ խօսող օտարականը Սևեռների յոյսն էր, Ռուբինեանց այն ժառանգը, որին հաւատափոխ էին կարծում և որը սակայն եկել էր հայրենիքի ազատութեան գործի գլուխն անցնելու:

Արիւնը եռ եկաւ, յուզումը, խանդակառութիւնն և յուսակից երազները երիտասարդական աւիւն ներշնչեցին նրան. քիչ էր մնում ել նէր եկեղեցու զանգերը հնչեցնել տար, գոռար, կանչէր ամբողջ գիւղովը մէկ, թէ վերջապէս եկել էր անօրէններից ազատելու օրը, թէ եօթը տարւայ տառապանքներից յետոյ, բացւելու էին

բախտաւոր օրեր, ազատ և անկախ ապրելու երջանկութիւն...

Բայց Թորոսին յաջողւեց զսպել նրա ոգեսրութիւնը: Հասկացրեց, որ խոհեմ բան չէր, ոյժերը չը ժողոված ու չը հաշւած, ժողովրդի արամագրութեան մասին անգամ որոշ գաղափար չը կազմած, զարթեցնել քնած թշնամուն, հետեապէս և մի բան չարած, դէմ առ դէմ ելնել ատամները սրած գաղանին:

Այդ էր պատճառը, որ թէ միւս և թէ հետեւեալ շատ օրերը, Թորոսը ծպտած իբր հովիւ, 5—6 ոչխար ու այծից բաղկացած հօտը առաջն արած, սկսեց պտոյաներ գործել շրջակայքներում, զննել յոյների բռնած դիրքերը, հետազօտել կառավարութեան ոյժը, իմանալ ժողովրդի արամագրութեան ու կուելու համար ունեցած պատրաստաւութիւնը:

Քահանան էլ պարապ չը մնաց: Թորոսը պատէրով թէ ինքը և թէ որդիները գնացին զանազան ուղղութեամբ՝ տեսնելու համար Սևեռնան այլեայլ հայ ցեղապեաների, ազգեցիկ մեծերի հետ:

Եւ հովիւն այն գեղեցկագէմ, մախաղը ուսին, երկար ցուպին կոթնած՝ իր ոչխարների հետ մէկ երեսում էր Վահկայ բերդի տակերը, մէկ յայտնում էր այս-այն ամրութեան առաջ, մինչև իսկ իբր հովիւ և գեղեցելու պատրւակով կարողա-

նում էր մտնել ամեն տեղ, քաղցրախօսութիւնով գրաւել տան ծառաներին, խօսեցնել, իմանալ ու լրտեսել:

Այդպէս նա ման եկաւ և այցելեց զրէթէ Տաւրոսի վրայ յոյների բոնած բոլոր ամրութիւններն ու գղեակները, տեղեկացաւ կառավարական զօրքի քանակին և դրութեանը, տեսաւ ու համոզւեց, որ հայ ժողովուրդը ատամ՝ էր կը ճանաչնում յոյների դէմ և մի նշանի էր կարօտ, մի դեկավարի, ոտքի ենելու և հայրենիքը հարստահարողներից մաքրելու համար:

Այդ բոլորը տեսաւ նա, ման զալու ժամանակ իմացաւ նաև, թէ որոնք էին ժողովրդի մէջ յուսալից հայ զլաւորները, որոնց կարելի էր կոչել իր մօտ՝ պէտք եղած բոպէին:

Ինչ վերաբերում էր զինմանը, թորոսը ուշադրութեամբ քննեց ու գտաւ, որ ժողովրդի ունեցած զէնքերը պիտի բաւէին՝ տիրելու համար միքանի կարևոր ամրութիւնների, ուր, ինչպէս հաստատ աեղեկացաւ, կային կառավարական կամ յոյն իշխանների զինարաններ, բաւական լի ամեն տեսակ ուղմամթերքով:

Ուրեմն կարելի էր սկսել. կարելի էր պարզել Սկ-Լեռների վրայ ազատութեան գրօշը, ժողովել կտրիճ երիտասարդներին, արագ շարժումներով և եռանդուն վճռականութեամբ յարձակւել թշնամու վրայ և նետել նրանց սարերից գուրս,

դէպի գաշտելը, այնտեղից էլ գուցէ հեռու, շատ հեռու...

✓ 4.

Աննկարազրելի է եռանդն ու ոգեռութիւննը, երբ Սկ-Լեռների մի ծայրից միւսը տարածւեց, թէ Լեռնի որդի թորոս իշխանը, ազատած յոյների ձեռքից, հասել էր հայրենի լեռները և այժմ կոչ էր անում ամենքին՝ գալ ժողովւելու իր շուրջը և յունական անարդ լուծը թօթափելու:

Կոչը տեղի էր ունենաւմ ծածկաբար. Քահանան, թորոսի պատւէրով, նախ տեսնել էր միքանի ամենաազգեցիկ ցեղապեանների հետ՝ յետոյ, նրանցից մի ժողով էր կազմել և երիտասարդ իշխանը ճանաչւելով՝ հոչակւել էր Ռուբինեանց ժառանգ և իշխող Սկ-Լեռների:

Այնուհետև իւրաքանչիւրը ելել էր կողմերը տանելու ուրախ լուրը. իւրաքանչիւրը եռանդուն կերպով և բաւական ծածուկ՝ զէնքի էր կոչել կրոի ընդունակ լեռնցիներին:

Ու չէր անցել միքանի ամիս, որ Սկ-Լեռների կատարներն ի վեր և կողերն ի վար, մի ծայրից գէպի միւսը, սլացել էր ընդհանուր նշանաբանը.

— Թորոս և ազատութիւն!..

Ամենքը, հասակաւոր և երիտասարդ, նոյն  
խել պատանիները—զինւեցին, առօրեայ գործե-  
րը ծերունիների և կանոնց խնամքին յանձնե-  
ցին և խումբ առ խումբ, գիշերանց քայլով,  
անծանօթ, դժւարին արահետներից ճանապար-  
հորդելով՝ գնացին հաւաքւելու թորոսի շուրջը:

Շուտով մօտ տասը հազար մարդ կազմ  
ու պատրաստ, սպասեցին թորոսի ցուցմունքին,  
սկսելու համար անկախութեան կոիւը:

Ճշմարիտ է, այդ բանակը կանոնաւոր զօրքի  
գէմ դժւար թէ կարողանար գիմանալ, սակայն  
կուղներից իւրաքանչիւրը վառւած էր այն մեծ  
գիտակցութեամբ, որ հայրենիքն է ազատելու  
կեղեքողների ձեռքից, որ իր երջանկութեան հա-  
մար է զէնքը շարժելու:

Թորոսը հնար եղածին չափ կարգի զրեց  
բանակը, գասաւորեց զինւորներին, քննեց զէն-  
քերը, կարգեց զօրավարներ, հրահանգներ տւաւ,  
ներշնչեց մտնաւանդ խիստ կարգապահութեան ո-  
գի և անմիջապէս, քանի դեռ թշնամին շւարած՝  
չը գիտէր ինչ անել, քանի դեռ միմիայն իրա-  
րանցումով էին յոյները յայտնում, որ գիտեն ե-  
ղածը—հայ բանակը շարժւեց և քայլերն ուղղեց  
դէպի Վահկայ ամրոցը:

Երկար չը տեեց Ռուբինեան պապենական  
այդ դղեակի զրաւումը: Յոյն պահակները կի-  
սովին կոտորւեցին, կիսովին անձատուր եղան և

ամրոցի իշխողին յաջողւեց փախչելով ազատւել:  
Վահկայ ամրոցի առումը արբեցուցիչ տպա-  
ւորութիւն գործեց լեռնցների վրայ: Զը կամե-  
ցան հանգստութիւն, աղաչելու եկան թորոսին,  
որ շարունակեն լեռները մաքրել յոյներից՝ ահ-  
խոնչ, անվաստակ արագութիւնով:

Բացի զրանից, կուղոների թիւը հետզհետէ  
մեծանում էր հեռւից հասնող նորանոր խրմ-  
քերով: Եկան նաև դաշտից, Տաւրոսի տեղի ցած-  
րեանային բարձունքներից և վշտագին պատմե-  
ցին իրենց սոսկալի զրութեան մասին:

Յետոյ հասան ուրիշ խմբեր էլ: Ամենքը ոգես-  
րութեամբ նկարագրում էին իրենց կողմի բնա-  
կիչների անհամբերութիւնը՝ տեմնելու Ռուբին-  
եանց խաչանիշ դրօշը եկիկեան բոլոր ամրու-  
թիւնների վրայ:

Սակայն թորոսը, նախ քան դաշտն իջնելը,  
որոշեց Սկ-Լեռները լիսվին կորզել յունական իշ-  
խանութիւնից և այնաեղ հիմք դնել հայկական  
պետութեան:

Եյդ մտքով էլ նա գիմեց միւս ամրոցների  
վրայ, որոնք զրաւեց մի առ մի, վանդեց յոյն  
իշխաններին և պաշտօնեաներին, բերդապահու-  
թիւնը յանձնեց հայ կառավարիչների ու հայ գնդե-  
րի և, այդպէս շուրջանակի մաքրելուց յետոյ յոյ-  
ներից, իջաւ դէպի ցած:

Մինչեւ շշմել էր: Մինչև ուշի կը դար,

մինչև յոյն կուսակալներն ու իշխանները միմեանց լուր կը հասցնէին և միանալու բանակցութիւններով կը զբաղւէին և մինչև օգնութիւն խնդրելու համար մարդ կուղարկէին կ. Պօլիս,— Թորոսը արդէն իր բանակի նետ զարկաւտիրեց Յնարզաբան, Թիլը, Առիւծի բերդը և քայլեց Սիս քաղաքի վրայ:

Յաղթական այդ քայլը մեծ հրճւանքով ընդունեց ազգաբնակութեան կողմից և յոյները, ծակ ու ծուկ մանելով, շտապեցին դուրս նետւել Կիլիկիայից, որովհետեւ Թորոսը արագ շարժմամբ համառմ էր մինչև Միջերկրական ծովի ափերը:

Այդ միջոցին էր, որ իշխանին օգնութեան հասան երկու ուժեղ բազուկներ, լաւ զօրավարներ, փորձւած պատերազմիկներ ևս. Դրանք Թորոսի կրտսեր եղբայրներն էին՝ Ստեփանէն ու Մլէնը, որոնք մինչև այդ՝ ապրել ու սնւել էին Հալէպի Նորէդգին ամիրայի արքունիքում:

Այնուհետեւ կուտղների, աւելի ճիշտը՝ առանց գրեթէ արիւնհեղութեան Կիլիկիան զրաւողների բանակը, երեք ճիւղի բաժանւած, երեք կողմից իր մէջ առաւ ողջ երկիրը և տարին չանցած՝ յունական իշխանութիւնը լիովին վերացրեց այդ կողմերից:

Այլևս պէտք էր կանգ առնել ու սկսել խաղաղ ներքին բարեկարգութիւնները, որոնց այն-

քան կարօա էր մանաւանդ ժողովրդի անտեսական կեանքը:

Թորոսը սկսեց մեծ իմաստութիւնով կառավարել երկիրը: Ուրախութիւնը, զւարթ երգերն ու եռուն երթեկեկութիւնը վերսկսեց երկրի ամեն կողմերում: Ամեն ծայրերից, նոյն իսկ եղիպատսից ու Միջագետքից Կիլիկիա սկսեցին լցւել հայ զաղթականութիւններ ապրելու համար Թուքինեան զրօշի տակ:

Զը պակասեցին նուև շնորհաւորութիւնները գրացի պետութիւններից ու մանր-մունը իշխանութիւններից, որոնք զարմացմամբ դիտում էին նոր պետութեան ծագումն ու այդքան զօրեղանալը:

Ամենից առաջ սրտագին շնորհաւորութիւններ եկան բուն Հայաստանի կաթողիկոսից, յետոյ դեսպաններ եկան Հալէպի Նորէդգին ամիրայից, Փրանսական Տաճարականների ասպետութիւնից, Անտիոքի լատին պրինցից (իշխան) և այդպէս ամեն աեղերից խնդրակցելու շտապեցին նրանք, որոնք երկրի վատ օրերում ոչ միայն անտարբեր էին մնացել, այլ նոյն իսկ միացել էին յափշտակիչներին:

Թորոսը գիտէր այդ ամենը, սակայն քաղաքագիտաբար և հեռատեսութեամբ՝ յայտնում էր իր շնորհակալութիւնը: Միւս կողմից, նա զէնքը ցած չէր գնում, այլ ճգնում էր կանոնաւոր բա-

նակի տէր դառնալ:

Ցիրաւի, իգուր չէին նրա զգուշութիւնները:  
Կ. Պօլսում ունեցած իր գործականները հաղորդում էին նրան հետզհետէ կարեոր լուրեր: Կայսեր իւրաքանչիւր շարժումն ու մտադրութիւնը ստիպում էր լինել աչալուրջ: Թելադրում էր պատրաստութիւն տեսնել և հնար եղածին չափ արագ:

Փոթորկի պայթումը մօտալուա էր:

Միքայէլ կայսրը, որ զբագւած էր հունգարական պատերազմներով, երբ լսեց Փոքր-Ասիայի տփերին կատարւող դէպքերը և յունական տիրապետութիւնների խլւելը, այն էլ լեռնցիների ձեռքով, երբ իմացաւ, որ Կ. Պօլսի բանտից խուսափած մի «ստրուկ» հայ իշխան կարողացել էր ահազին բանակ կազմել և յունական կուսակալներին վանդել, զօրագնդին ջարդել, քաղաքները տիրել, ասսաթիկ զայրացաւ և ուշքը դարձրեց դէպի կիլիկիա:

Այդ ուշադրութիւնը հրաւիրեցին ոչ միայն կայսերական պաշտօնեաններն ու յոյն իշխանները, այլ նոյն իսկ լատին «պրինցներն» էլ:

Յաւած տեղեր ունէին այդ եւրոպացի նորամուտ «պրինցները» (և կամ ինչպէս հայ պատմիչներն են զրում—«բրինձները»), թորոսը առանց այլայլութեան խլել էր նրանցից այն բոլոր դղեակներն ու կալւածները, որոնց նրանք

տիրացել էին երկրի անտէրութեան և Լեռնի գերութեան տարիներում:

Ահա այդ մարդիկ, միանալով նոյն իսկ այն հայ իշխանների հետ, որոնց թորոսը նոյնպէս վոնդել էր երկրից, իբր յունասէրների և հարբաւահարոզների—դիմեցին կայսրին և իրենց ամբողջ օգնութիւնը առաջարկեցին՝ ջնջելու համար հայկական նոր պետութիւնը և ոչնչացնելու թորոսի ոյժը:

Եւ կայսրը, յիլաւի, գտնելով, որ շատ էր առաջ գնացել լեռնցին և որ հարկաւոր էր վերջ գնել թորոսի արածներին,—սկսեց մեծ պատրաստութիւն տեսնել՝ Փոքր-Ասիա ուղարկելու համար մի նւաճող և պատժող բանակ:

1146 թւին, Կիլիկիայի ավերն էին իջնում յունական զօրքեր՝ հրամանաւարութեամբ կայսեր հօրեղբօր որդի Անդրոնիկոս Կեսարի:

## 5.

Անսպասելի չէր յունական բանակի գալը: Խլել էին կայսրութեան մի լաւագոյն և արդիւնաւէտ մասը, կոտորել էին այդ մասը պահպանող զօրքը, վոնդել, ծեծել, կողոպաել էին պետութեան մէջ յայտնի կուսականներին և իշխաններին և վերջապէս Բիւզանդիոնի դէմ սպառնալից կանգնեցրել էին մի նոր, ոչ-բարեկամ, այլ

նոյն իսկ բաւական շատ վրէժներ ունեցող պետութիւն։

Պէտք էր փշրել այդ ապստամբ հպատակներին և գլխովին ջնջել նրանց։ Այդպէս էլ պատւէր էր ստացել կայսրից Անդրոնիկոսը. — Կիլիկիան գատարկել հայերից, Տաւրոսի լեռները տմայացնել որ և է բնակութիւնից։

Անդրոնիկոսի բանակը ափին ելած՝ իրեն օդնական ունեցաւ բոլոր յոյն կուսականերին ու իշխաններին, այլ և լատին «ալրինց»ների և հայ միքանի վասարների։

Հոծ, անդիմադրելի մի կոյտ էր այն, որ գէպի հայերն էր քայլում սպանագին։ Կասկած չէր կարող լինել, որ այս անգամ արդէն Սև-Լեռները վերջնականապէս ամայանալու էին հայերից։

Երբ Թորոսը լսեց յոյների գալը, պատրաստութիւնները շատապեցրեց, պէտք եղած վերջին հրամանները ուղարկեց ամրութիւններին և ինքը դնաց թշնամուն սպասելու Մամեստիա քաղաքում։ Միւս կողմից էլ կազմեց հեծելազօրքի մի խումբ, յանձնեց իր Մլեհ եղբօրը և արձակեց նրան՝ ասպատակելու յունական հեռաւոր տիրապետութիւնները կիլիկիայից դուրս։

Սոսկալի էր Մլեհը իր հեծելազօրքով։ Կատաղի երիտասարդին զսպում էր միմիայն եղբօր հրամանը՝ քիչ արիւն թափելու։ Դրա փոխարէն

նա աւերում էր, գերում, տաւար ու մարդկի իշրար խառնած՝ առաջն անում ու քշում, իսկ բնակութիւններն ու գաշտօրայք անապտափ փոխում։

Այդպէս էր, որ նա յանդկնաբար մինչև իսկ քայլեց յունաց հետ միաբանած Լամբրոն իշխանի վրայ, յունաց բանակի համար ժողոված պաշտարի կէսը փչացրեց, միւս կէսն էլ քշեց բերաւ դէպի Մամեստիա։

Զարհուրելի էր Անդրոնիկոսի կատաղութիւնը, երբ այդ ամենը իմացաւ։ Հրամայեց արագացնել ընթացքը, եկաւ բանակեց Մամեստիայի տուած ու ձեռնարկեց պաշտաման գործողութիւնների։

Մօտ 15—20 հազարից բաղկացած նրա բանակը յիրաւի կարող էր հեշտութեամբ փշրել Թորոսի ոյժը, եթէ դէմ առ դէմ կուի ելնէին։ Բայց հայերը վճռեցին պաշտամանողական դիրք միայն բռնել։

Իսկ երբ պաշտամը սկսեց, Թորոսի դէմքը մռայլեց։ Պաշար՝ երկար գիմանալու համար չը կար քաղաքում, և վերջապէս, եթէ լինէր էլ անտանելի կը լինէր նստել գամեած այդ շշնակի մէջ, դիտել միայն թշնամու գալարումները և Մամեստիան գրաւելու իզուր ջանքերը։

Այդ մտածութեամբ էր, որ նա վճռեց հաշտութեան մի քայլ անել և առաջարկութիւն ուղարկել Անդրոնիկոսին։ Ով գիտէ, գուցէ յունա-

կան կտուվարութիւնը բաւ ականանար միմիայն գերիշխանութիւնով, քանի որ գէմ առ գէմ եկած հայերի ունեցած ոյժին, դիտել էր, որ այսքան էլ հեշտ չէր այլևս հպատակ և գերի շինել և կամ ջնջել նրանց:

Չը նայելով ՄԵհի և ուրիշ զօրագլուխների գժգոնութեանը, Թորոսը յունական բանակը ուղարկեց մի պատգամաւորթիւն և պատիրեց Անդրոնիկոսին ասել հետեւելով.

— Ի՞նչ է ուզում մեզնից կայսը. Ի՞նչ ենք արել մենք յոյներին. չէ որ մեր կալւածներն ենք միայն խլել նրանցից և մեր երկիրները ազատել նրանց կեղեքումներից։ Կայսեր գերիշխանութիւնը մենք պատրաստ ենք ընդունել, միայն թող ճանաչէ նա մեր հայրենական իրաւունքները։

Հայ պատգամաւութիւնը ընդունեց արհամարհաբար։ Անդրոնիկոսը խնջոյքի մէջ էր իր զօրագարների հետ։ Լսեց դէմքը կնճռած, յետոյ և ոչ իսկ նայեց նրանց և գոչեց։

— Ասացէք ապստամբին, որ բերել եմ հետո իր հօրը կապող շղթաները։ Կայսեր հրամանն է՝ նրանով կապել նաև այդ փախստականին և տանել դէպի կախաղան։

Այսուհետեւ երկու ճանապարհ կար Թորոսի առաջ. կամ յուսահատ կուով դուրս նետել և մեռնել սուրը ձեռքին և կամ պաշարւած մնալ և իր յամառութեամբ յուսահատեցնել յոյներին։

✓ Երկրորդ միջոցը երկար էր և անվստահելի. առաջնը յանդուգն և վտանգաւոր։ Թորոսը փորձեց առաջինը։

Չը նայելով, որ յունական բանակի մէջ տեղի էին ունենում պաշարման պատրաստութիւններ, այսուամենայնիւ ամեն գիշեր հայերը իրենց պարիսպների վրայից անզամ լսում էին Անդրոնիկոսի տաղաւարներից հասնող զեղիսութեան, երդի և նւագարանների ձայները։ Լրտեսները մանրամասն նկարագրում էին, թէ ինչպէս յոյն զօրագարներն այլևս ապահով, որ Թորոսին ձգմելլ հեշտ էր—իրենք իրենց տւել էին քէֆի, խառնակ ու անկարդ կեանք էին վարում, լկաի կանայք բանակի մէջ վխտում էին և զօրքի կարգապահութիւնը զգալի կերպով թուլանում էր հետզհետէ։

Կատարեալ հակապատկեր էր Թորոսի բանակը, ուր խիստ հսկողութիւնն ու զինւորական կարգապահութիւնը ամեն ըոպէ լարւած էին պահում իւրաքանչիւր կուսողի։

Բայց Թորոսը սպասում էր, որ բնութիւնն ևս օգնի իրեն։

Եւ մի մութ գիշեր, երբ սաստիկ անձրւն ու քամին ներս էին կծկել յոյն զօրքերին իրենց վրանների տակ, իսկ Անդրոնիկոսը, ըրջապաւած կանանցով, իր զօրագարների հետ հարբած, փոթորկից աւելի էր աղմկում—Թորոսը

պատրաստեց յարձակումի:

Արագ վճռականութեամբ քանդել տւաւ նա յունական բանակի հակառակ կողմից պարիսպը, զօրքը երեք խմբերի բաժանեց, և մի կիսաշրջան կազմելով շրջապատեց յոյներին:

Անձրևի, փոթորկի մէջ, միահամուռ աղազակներ բերնին՝ սկսեցին յարձակումը:

Զարհութելի էր շփոթն ու իրարանցումը: Ամեն ինչ տակն ու վրայ եղաւ, յոյները զլուխները կորցրին և միմեանց անդամ կոտորել սկսեցին:

Այլև կոիւ չէր այդ, այլ կոտորած: Պէտք եղաւ թորոսի միջամտութիւնը, որ խնայեն և փոխանակ սպանելու, գերի միայն վերցնեն:

Հուսադէմին այլև ոչինչ չէր մնացել կանգուն՝ Անդրոնիկոսի հսկայական բանակից: Բագմաթիւ դիակներ, տապալւած վրաններ, թափւած զէնք ու պաշար, անձրևն ու արեան ճապաղիքը մի զգելի խառնուրդ էին ներկայացնում:

Անդրոնիկոսին մի կերպ յաջողւել էր ձի հեծնել և մի խումբ ձիաւորների հետ դուրս սպրտել կոտորածից ու փախչել մինչև Անտիոք:

Գերի բռնւեցին յոյն կուսականերից, իշխաններից և հայ դաշնակիցներից զրեթէ մեծ մասը, այլ և շատ հասարակ զինւորներ: Անհաշիւ ու առատ էր աւարը: Փախչողները միայն իրենց անձն

էին ազատել, լցւել էին նաւերն ու խուսափել:

Հասարակ զինւորներին զինաթափ արին և աղատ թողեցին վերապահնալու իրենց տեղերը, իսկ իշխաններին և կուսականներին թորոսը կապանքների մէջ հրամայեց պահել, մինչև որ նրանց մասին յատուկ վճիռ մտածւէր:

Մինչ այդ, Անդրոնիկոսը սթափւած և հազիւ աղատւած մահւանից, Անտիոքից լուր ուղարկեց կայսրին՝ իր անյաջող պատերազմի, վնասների, իշխանների գերութեան մասին և, պարտութեան ամբողջ մեղքը ծանրացնելով զօրքի թուլութեան վրայ, թորոսին էլ մեղաղքեց անազնիւ խաբէութեան մէջ:

Կայսրը սաստիկ զարմացաւ, երբ լսեց բուրը: Շտապեց նախ և առաջ իր իշխաններին ու կուսականներին ազատել գերութիւնից: Այդ մտադրութեամբ նա յատուկ պատգամաւորներ ուղարկեց թորոսին և փրկանքի գնով խնդրեց ազատել բռնւածներին:

Երբ պատգամաւորները Թորոսին ներկայացան կայսեր խնդիրքով, նա հարցրեց.

— Միթէ այդքան յարգի են կայսեր մօտ այդ մարդիկը որ փնդ էլ է վճարում նրանց համար:

Պատգամաւորները չը գտան ոչինչ առելու և լուռ մնացին:

— Իսկ կարող էք որոշել ինձ, կամ կայսրը որոշել է արդեօք, թէ արքան արժեն նրանք:

Պատգամաւորները աւելի ևս շւարեցին և չը գիտէին ինչ ասել: Եթէ մհծ գներ նշանակէին — պէտք էր վճարել, իսկ եթէ պակաս գնահատէին — անպատճեն կը լինէր թէ կայսրի և թէ յոյն իշխանների համար:

— Իշխան, խօսեց վերջապէս նրանց զլիսաւորը — դու ինքդ շատ լաւ գիտես նրանց գինը. որոշիր և վճարենք:

Թորոսը ժպատաց ու ասաց.

— Եթէ արժէք ունենային, չէ՞ ծախիլ: Վճարեցէք, ինչ որ ուզում էք և առէք տարէք:

Այնուհետեւ գեսպանները երկար խորհրդակցին գերիների հետ և այն եզրակացութեան եկան, որ անհրաժեշտ էր բարձր գներ նշանակել ու վճարել՝ ծաղրի առարկայ չը դառնալու համար:


Եւ երբ դրամը գտած՝ յանձնում էին Թորոսին, նա տեղնուածեղը, գեսպանների ներկայութեամբ բոլորն էլ բաժանեց իր զինորներին:

Պէտք էր աեսնել յոյների զարմանքը: Մէկը մինչև անդամ չը կարողացաւ զսպել իրեն և գոչեց.

— Ի՞նչ, այդ բոլորը հասարակ զինորներին...

Թորոսը նայեց յոյներին և ժպատաց:

— Որպէսզի նորից բռնեն ձեր իշխաններին ու մեծերին, ասաց նա. բռնեն և ինձ բերեն...



6.

Այդ վառաւոր յաղթութիւններից յետոյ, Թորոսը ձեռնարկեց իր երկրի սահմանները ընդարձակելուն: Նա ոչ միայն գրաւեց յոյներից խրած մասերը, այլ մինչև իսկ տիրեց նրանց տեղերը: Այսպէս, նա առաւ Տարսոնը՝ խիստ պաշարում կց յետոյ, գրաւեց Փայտաը, ձեռք ձգեց կոռիկոսի ամրութիւնները իր շրջակայքովը և յանձնեց Մլեհին, որ ամրացնէ... և այսպէս հասաւ մինչև Ալէքսանդրիայի ծոցը, որ այնուհետեւ կոչւեց Հայկական ծոց:

Մլեհը սակայն շատ մտատանջութեան առիթ տւաւ Թորոսին՝ իր անկարգ ու զեղլս կեանքով, անկարգապահ և անհնազանդ վարմունքովը: Բանը այստեղ էր հասցրել այդ անխոհեմ երիտասարդը, որ բարձրաձայն, այն էլ թշնամիների ներկայութեամբ, ամբասատանում էր եղբօրը, որ նա խլել է հօր թողած ամբողջ ժառանգութիւնը, մինչգեռ իրաւամբ, իբր թէ Լեոնի թողած երկրների մի մասի տէրը՝ ինքը — Մլեհը պիտի լինէր:

Թորոսը ներողամտաբար չը լսել էր ձեւագնում այդ ամենը և ճգնում էր յորդորներով ու մեղմութեամբ զապել եղօրը: Բայցի դրանից, նա շատ աւելի կարեսը խնդիրներ ունէր իր առաջ և ստիպւած էր պատելազմի, ինքնապաշտպանութեան նոր պատրաստութիւնների մտսին հոգալ:

Իկոնիայի մահմեղական իշխան Մաքսուդ ամիրան, դրդւած թիւգանդիոնից, այլ և ճոխ աւարի յոյսով, թալանի սովոր աւազակներից մի մեծ զօրագունդ կազմած՝ մտաւ կիլիկիա: Բայց երբ դէմ առ դէմ եկաւ Թորոսի պատրաստութիւններին և ոյժին, տեսաւ, որ իր զօրքը անշուշտ պիտի ջարդէր և ոչնչանար: Ու բարւոք համարեց, քանի ուշ չէր, հաշտութեան դաշն կապել Թորոսի հետ և փոխադարձ բարեկամութեան խոստումներից յետոյ, ետ դառնալ:

Դրանից յետոյ, Հալէպի նուրէդդին ամիրայի գալու մասին լուր հասաւ Թորոսին: Այդ ամիրան էլ, ընծաներով ու խոստումներով յորդորւած կայսրից, մտածել էր աւարի տալ Թորոսի երկիրը:

Բայց Թորոսը չսպասեց նրա գալուն: ինքը նախայրձակ լինելով՝ գրոհ տւաւ դէպի Հալէպի սահմանները և սկսեց այնպիսի աւեր գործել այնտեղ, որ նուրէդդինը ստիպւած եղաւ թողնել իր մտագրութիւնը:

Հազիւ ազատւել էր մահմեղական ասպատակութիւններից, որ զէնքը նորից ուղղեց դէպի յոյները: Լուր հասաւ, որ կիլիկիայի ափերն է ելել Միքայէլ Պրանոս զօրավարը՝ մեծ բանակով:

Թորոսը առանց այլեալութեան արշաւեց նրանց վրայ և մի լաւ ջարդ տալով՝ քշեց: Նոյն կերպ վարւեց նա դրանից յետոյ եկող յունական երկրորդ բանակի հետ, որին առաջնորդում էր Անդրոնիկոս Եւփորպէնը:

Այդ միջոցներին էր, որ յոյները դաւագրութիւնով բռնեցին Թորոսի եղօրը՝ Մաեփանէին և զարհուրելի մահով սպանեցին:

Մաեփանէն թէկ քաջ երիտասարդ էր, բայց իր յանդգնութիւնների մէջ անզգոյշ էր և անհետատես: Չը նայելով Թորոսի յորդորներին, նա ինքնիշխան կերպով, սրիկաներից զնդեր կազմած, ասպատակում էր յունաց գաւառները և սաստիկ նեղացնում նրանց:

Այդպիսի անկանոն և անիրաւ յարձակումները անմեղ ազգաբնակութեան վրայ՝ ջանաց չը թողնել Թորոսը, բայց չը յաջողւեց: Իսկ յոյները մի օր դարձն լարեցին, յանկարծ բռնեցին Մաեփանէին և ձեռքն ու ոտքը կապելով՝ ողջողջ ձգեցին եռացող ջրով լի կաթսայի մէջ և այգպիսի քստմելի կերպով սպանեցին:

Սոսկալի էր տեսնել Թորոսի կատաղութիւնը,

Երբ իմացաւ եղբօր այդպիսի մահը։ Այլևս չը կարողացաւ սահման գնել զայրոյթին։ Մռնչելով գուրս նետւեց, առաւ իր հետ կատաղիների մի ամբողջ վաշտ և նետւեց յոյների կողմը։ Վրայ հասաւ այդ խոկ բոտէին Մլեհն էլ՝ իր բարբարոս հեծելազօրքի հետ և այսուհետեւ սկսւեց մի այնպիսի նախճիրային արշաւանք, որ միակ մեծ սխալը կարելի է համարել Թորոսի, սխալն ու վայրենութիւնը։

Պատմութիւնը ասում է, որ ոչ միայն խլեցին յոյներից նրանց բոլոր կալածները, այլ և կոտորեցին նրանցից մօտ 10000 հոգի։ Ու գեռ պիտի շարունակ էր այդ կատաղի կոտարածը, եթէ մէջ չընկնէր Երուսաղէմի թագաւորը և չը միշտորդէր վերջ տալու։

Երբ Մանուէլ Կոմինոս կայսրի ականջին հասաւ այդ ամենը, սաստիկ բարկացած՝ որոշեց ինքը անձամբ անցնել մի ստւար բանակի գլուխը և գնալ ոչնչացնել Կիլիկիայում թէ հայկական նոր պետութիւնը և թէ հայերի գոյութիւնը ընդ միշտ։

Իր այդ որոշումը գործադրելու պատրաստութիւնները տեսաւ այնքան արագ, ծածուկ և վարպետօքէն, որ կ. Պօլառւմ եղած Թորոսի լրտեսները ոչ մի լուր հասցնել չը կարողացան Կիլիկիա։

Կայսեր մուտքը իր երկրների սահմանները՝ Թորոսը իմացաւ մի լատին ուխտաւորից։ Սասաիկ այլայլած, բայց առանց ինքնիրեն կորցնելու, իսկոյն հեռացաւ Տարսոնից, արագութեամբ լուր հասցրեց բոլոր ամբութիւններին, որ պաշտպանւեն, բանակը գէնքի կոչեց, հայրենիքը վտանգի մէջ յայտարարեց, քաղաքները կուի համար պատրաստեց և ինքը քաշւելով դէպի լեռները, ամբացաւ այնտեղ։

Մինչ այդ, քանի յունական բանակը երկրի ներսերն էր մտնում — աւելի էր մեծանում։ Միանալու էին գալիս նրան լատին իշխանները, Երուսաղէմի թագաւորն ու Տաճարական ասպետները, միանում էին նաև յոյն իշխաններն ու հայ վասալները, որոնք կամ չէին սիրում Թորոսին կամ աւելի «հեռատես» էին։

Այդպիսով կայսրը, մեծ ոյժ գումարած, քայլեց գէպի Տարսոն, առաւ այն, ապա զրաւեց Անարգաբան, Աղանան և Մամեստիան։ Մամեստիայում նա հաստատեց իր արքունիքը։

Թորոսը սակայն երեան չէր գալիս և լեռներիցը չէր իջնում կռւելու։ Պաշարել Սկանեները՝ միտք չունէր և անհնար էր, իսկ յոյն զօրավարները, լաւ գիտենալով լեռներն ենելու կորստաբեր հետեւնքը, ոչ մի կերպ չէին գնում դաշտից գուրս գալ։

Սակայն անհրաժեշտ էր շուառվ նւաճել եր-

կիրը, որովհետև բանակի մեծամալու հետ, մեծանում էր նաև ուտելիքի, պաշարի պահանջը։ Սկսում էր սով, արդէն տրասունջներ էին լսում։ Տիրած քաղաքներն ու գտառները դատարկւել էին մշակող ձեռքերից, բոլորը լեռներն ի վեր էին փախել, դաշտավայրերում կանգ էին առել կեանքն ու արգիւնագործութիւնը։

Կայսրը սկսեց լուրջ կերպով անհանգստանալ, Երկար դիմանալ անհնարի էր, Թորոսը միմիայն խմբական յանկարծակի յարձակումներով էր իր գոյութիւնը իմացնում։ Եւ այդ յարձակումները ոչ միայն ձեղքեր էին բաց անում բանակի մեջ, այլև խլում կամ ոչնչացնում էին յունական զօրքի վերջին պաշարը, ունեցած չնչին ուտելիքը։

Տեղի ունեցան պատերազմական երկար խորհուրդներ և վերջիվերջոյ կայսրը վճուց բանակցութեան մէջ մտնել Թորոսի հետ։ Երուսաղէմի Բալդուին Գ. թագաւորը յանձն առաւ անձամբ տանել պայմանները։

Հաշտութեան ամենաառաջին պայմանը այն էր, որ Թորոսը պիտի Մամեստիա իջնէր և յայտնէր հնազանդութիւն կայսեր, ընդունելով նրա գերիշխանութիւնը Կիլիկիայի վրայ։ Դրա փոխարէն կայսրը կը շնորհէր Թորոսին Կիլիկիայի կրտակալութեան «պաշտօնը» և «հայոց իշխան» տիտղոսը։ Կիլիկիան սակայն կը լինէր անկախ

պետութիւն, կը մնար հայերի ձեռքը, բացի Անարգաբա քաղաքից։

Թորոսը համաձայնւեց այդ պայմաններին և իշխանական շքով Մամեստիա գնաց։ Կայսրը երբ տեսաւ նրան ու երկար խօսեց հետը, այնքան հմայւեց նրա վարմունքովը ու քաղցրախօսութեամբ, որ հաստատելուց բացի խոստացածները, աւելացրեց նաև «պանսէփաստու» (մեծ իշխան) տիտղոսը։

Վերջապէս Կիլիկիան շունչ առաւ այնուհետեւ և երկարատես պատերազմներից, յունական հալածանքներից ազատ՝ զբաղւեց իր անտեսական բարօրութեամբ։ Կայսրը իր բանակովը վերադարձաւ Յունաստան, իսկ Փոքր-Ասիայի յոյն, լատին և ուրիշ իշխանները շաապեցին բարեկամանալ Թորոսի հետ։

Տաւրոսի լեռների բարձունքներից սկսած մինչև Միջերկրական ծովի ափերի վրայ, լեռնային Կիլիկիայից մինչև գաշտային գեղածիծաղ մասերում նոսից և աւելի բարձր հնչել սկսեցին ուրախ երգերի և երաժշտութեան ձայները. դաշտերը ծածկւեցին կանաչ արտերով, ամեն տեղ կեանքը եռալ սկսեց։ Ճանապարհների վրայ երևացին գւարթ կարաւաններ և այդպէս, դարձեալ երկան եկաւ այն կենսալից անտեսութիւնը, որը գոյանում է միմիայն կատարեալ ազատութիւնից և անվրդով խաղաղութիւնից...

Բայց Թորոսին—իրեն վիճակւած չէր կարծես անդորրութիւն։ Երկիրն էլ իր իշխանի նման անբախտ էր։ Որովհեաւ արտաքին թշնամութիւններին և կոփւներին անմիջապէս յաջորդեցին ներքին երկպառակութիւններ։

Յոյները գիտէին թակարդներ լարել՝ բարեկամութեան ձեռք պարզելու րոպէին անգամ։ Այդպէս, կայսրը նախ քան հեռանալը, Կիլիկիայի մի ուրիշ զօրեղ հայ իշխանի, Համբրոնի Օշինին տւել էր «սեբաստոս» (իշխան) տիտղոսը և յայտնել, որ նա կարող էր և չը հնագանդել Թորոսին։

Այդ խորամանկ պարզեատրութիւնը առաջ բերաւ վէճ, ապա և արիւնանեղ կոփւներ։ Թորոսը շատ լաւ տեսաւ, թէ ինչպէս Օշինը յունական իշխանների և Բիւզանդիոնի կոյր գործիքը դարձած, հետզնետէ փորում էր Թուրքինեանց իշխանութեան հիմքը։ Պէտք էր վերջ գնել երկիր մէջ գոյութիւն ունեցող երկրորդ ինքնիշխանութեանը։ Թորոսը պահանջեց Օշինից հնագանդութիւն։ Օշինը անմիջապէս յայտարարեց իրեն հարկատու կայսրին և երկիրը՝ յունական երկիր։

Թորոսը բարկացաւ և զէնքի դիմեց։ Արիւնանեղութիւնը երկար կը տեէր, եթէ մէջ չընկնէր ներսէս Շնորհալի կաթողիկոսը։ Նա այնքան լաւ կատարեց հաշտարարի դերը, որ ինամեցրեց նոյն իսկ երկու իշխաններին։ Թորոսը իր աղ-

ջիկը տւաւ Օշինի որդի Հեթումին։

Այդ ևս վերջացրած, Թորոսը դէմ առ դէմ եկաւ իր եղբօր՝ Մլեհի խայտառակութիւններին։ Այս անգամ Մլեհը իր սրիկանների հետ դաւ էր սարքել Թորոսին սպանելու։ Իմացւեց թակարդի տեղը, Մլեհը ինքը բանսեց, բայց Թորոսը էլի վեհանձնաբար ներեց նրան, միայն թէ շատ սուկի, արծաթ տալով, երկրիցը դուրս վռնդեց։ Մլեհը գնաց Հալէպի նուրէդդին ամիրայի մօտ և այստեղ սպասեց եղբօր մահւանը։

Եւ շատ չսպասեց։ Թորոսը յոզնած ու վշտարեկ, միքանի տարի՝ ևս իր ընդարձակ երկրի և երջանիկ ժողովրդի բարօրութիւնը տեսնելուց յետոյ, 1168 թւին մեռաւ, թողնելով թէ զօրքն ու թէ ամբողջ Կիլիկիան սուրգի մէջ։

Յիշաւի, անկեղծօրէն ողբացին նրա մահը թէ հայերը և թէ օտարները։ Նոյն ինքն յունաց կայսրը ցաւեց՝ լսելով քաջի մահը։

Այդպէս էր, որ ապրեց ու մեռաւ Թուրքինեան ամենամեծ իշխաններից մէկը, Թորոս երկրորդը, որ ամբողջ 23 տարի (1145 - 1168) յամառ կու տալով յունական հզօր կայսրութեան, այլ և դրացի շատ չարակամ յափշտակիչների դէմ, կարողացաւ ոչ միայն ետ խլել իր հայրենական ժառանգութիւնը, այլ և շատ ընդարձակեց այն, զբաւեց ամբողջ Կիլիկիան և յաջորդներին թողեց մի պատկառելի զօրութիւն և

կանոնաւոր պետութիւն:

Նրա օրով Կիլիկիայի ազգաբնակութիւնը այնքան բազմացաւ, որ այլևս ազատ հող չը կար, Նրա օրով երգն ու խնդութիւնը հնչում էին ամեն անից, իսկ ինքը, այդ բոլորի ստեղծողն ու գոյացնողը, մեռաւ վշտացած, զուրկ ընտանեկան ամեն երջանկութիւնից:

Մեռաւ մեծ մարդու նման, որ իր կառուցած երջանկութեան կողքին՝ անձնապես—ինքը մնում է ապերջանիկ:





23.

Հայոց  
Հայոց

5721

0001795

2013

ՀՅ Ազգային գրադարան



NL0001795

